ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"2" փետրվարի 2011թ. №7

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի և 1.17. կետի ա/ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության ժամանակ նրանց կողմից՝ բնակչությանը դեղերով ապահովման գործում առկա թերացումների վերաբերյալ բողոքները, **կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում գործող ոչ պետական առողջապահական հաստատությունների գործունեության, մասնավորապես բնակչության դեղերով ապահովման գործընթացի համապատասխանությունը օրենսդրությանը ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ծատրյան Աշոտ — ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/ հանձնաժողովի նախագահ/.

Շահնազարյան Արամ- — ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ.

Օրբելյան Սմբատ- — <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն / իր համաձայնությամբ/.

Մարության Քրիստինե- — ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ:

2. Հանձնաժողովին՝ մեկամսյա ժամկետում ապահովել ուսումնասիրությունների անցկացումը և ներկայացնել տեղեկատվություն:

3. Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2011թ.փետրվարի 2
ք. Կապան